


B R I T I S H M U S E U M




9-95 ԵՐԵՒԱՅԻԹ ԿՐԵՑ

ՎԵՐԱՎԱՍՏԻՎԱԿԱ ԵԴ Ի ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱ
ՈՃՈ ԽՈՎԵՑԵԱԼ

Ի ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԵ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻՈՅ Ի ՄԻԱԲԱՆ
ՍՐԲՈՅ ԱԹՈՒՈՅՍ ԵՐՈՒՍԱՀԵՄԻ

Ի ԼՈՅՍ ԸՆՔԱՑԵԱԼ

Ի ԿԱՑՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ.Տ. ՆԵՐՄԵՍԻ ՎԵհափառ
ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒԴԿՈՍԻ
ԵԴ Ի ՊԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՅ ԱԹՈՒՈՅՍ
ԵՐՈՒՍԱՀԵՄԻ Տ.Տ. ՅՈՎԱԿԵՆԵՈՒ ՍՐԲԱՋՆ
ԱՐՔԵՊՈՏՈԿՈՊՈՍԻ
ԵԴ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ Տ.Տ. ՅԱԿՈԲԱՅ
ՍՐԲԱՋՆ ԱՐՔԵՊՈՏՈԿՈՊՈՍԻ



ՅԵՐՈՒՍԱՀԵՄԻ

Ի ՏՊԱՐԱԿԱ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԵԱՆՑ

1132

ԱՄԵՐԻԿԱՆ
1952 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Խաչեսլու թիվ

“ Օ, ԳՈՅՆ ԼԵՐ՝ զանձն քո պահեա ՚ի նմանէ,
(՚ի մոլար կրից .) և եղիցիս դու անձին
քու մ որպէս հայելի ջնջեալու : Այլ . ԺԲ . 11.

ՆԱԽԾԱՑՈՒԹԻՒՆ

Չեմք՝ որ յանկարս ձգին, ոչ առանց վիրաց ժողովին ՚ի ծոց։ Աւք բժժոտեալք՝ ուղղակի ՚ի պշնուշ զգեղեցկութեամբն արեգական, ոչ բաւեն ժուժել առանց կըսկծանաց։ և որոց կարողութիւնն անկատար, ներգործութիւն իրին տեսակաւորելց՝ թերատ։ Այսոքիկ ըստ բնականին։ Բայց ըզբազումն ընթերցեալ եմք, որք դրոյս յԱռառուած հաստատեալ քան զկար իւրեանց ՚ի չքնաղ տեսութիւն իմաստից հոգեալէս բարձրացեալ։ Եւ քաջ իսկ զի մոտաց սրբոց ՚ի նոյն աստիճանս վայելէ թեապարել։¹ Օ խորըս իմաստից հոգւոյն քննել մոտաց այնոցիկ է, ասէ Արքիս², որ հոգւովն Աստուծոյ վարին ո։ Եւ այսոքիկ ըստ գերբնականին։ Բայց որ զկիրս թաթաւեաց զգայականաւ, « մի ակնկալցի մարդն այն առնուլ ինչ յԱռառուծոյ ո, ասէ երանելին Հակովը ու³։ Եւ յայսմանէ զգածմանէ ծնանի մեզք, յօրմէ և սնարդութիւն։ յոր թէ ոք և յապաղեաց,

¹ Կննե. Ճառ զիւռ. յիշ. 354։ ² Գլ. Ա. 7։

անցեալ զբացաստկանաւն՝ 'ի դրականն իջանէ յանարգութիւն¹, յորմէ փրկեսցէ զմեզ Աստուած : Ուստի յայսպիսեաց աստի ՚ի սրբել զմիսս, կամ լաւ ես ըստ Պաւղոսի², ընկզմել զմահկանացուս ՚ի կենաց անտի, յոյսք օգնեն և ազօթք ընտրելոցն Աստուծոյ :

Արդ՝ ես որ զուրկ եմ ՚ի բնական և ՚ի գերբնական կատարելութենէ, և կրիւք ըղուածեալ յերեւութական փոփոխելիս, բւռութեմն վատահացայց զմարդկայինս և զաստուածայինս խօսել, և զանձն ցուցանել կարող : Ի՞սոյց կարդացեալ զբան Պլոկղի³, « Կարողութիւն ամենայն էակաց՝ ՚ի միակ յշակէ, և ամենայն կատարելութիւն յշակըն միակ ո . զամենայն ճիղն յուռոյ իմոյ ՚ի նոյն Ոիակին եղեալ, յինէն ոչ մի ինչ՝ ոյլ նավաւ և ՚ի նմանէ ընդունել զկարսղութիւն, նեցուկ ՚ի ձեռին և զաղերս որբոցն առեալ, և խրախուսեալ ՚ի մարգարեւութենէն : Դաւթի⁴ բանամ զբերան : Եց ուրեմն զաս ո՛ Հոգի Աստուծոյ :

¹ Հ-ԲԵՐԴ. յԵՐ. 60 :

² Բ. ԿՐԴ. Ե. 4 :

³ ԱՃ. ՊՐԵՂԱՎ. ՀՀ. ՃԹ. :

⁴ ՍՂՎ. Զ. 11 :

ՃԱՆՈԹԱՏԹԻՏՆ ԿԱՆԱՒԽ.

Ու յուշած գերազանցութեան մուշ և լինա ՚ի հաս-
ըսկին լի չկ' լի:

Օ աստուածամերձ զօրութիւն իմն ճա-
նաչեմ ՚ի մարդ , և այն է միաք : Ե՞ր զայն
որ գիտաց գնալ ընդ առաջնորդութիւնս
նորա հաւատարիմ : Ըենթալուսնեայս ո՞ր
այն զօրութիւն՝ որ ՚ի մասնաւորաց քննու-
թենէ մինչեւ ցՎիտկն , և անտի ցատորակայս
բաւական ՚ի ժամանել : Եւ որ առաւելին է՝
զցանկալի տեսութիւն վերնոյն՝ (թէ և ըստ
Պաւղոսի¹ , ասուէն իբրև ընդ հայելի օրի-
նակաւ) , զօրանոյ յինքն գրաւել , ՚ի նոյն
զմայլիլ , նովաւ պարարիլ , և ՚ի նմանէ ևս
քան զեւ պայծառանալ : Եւ թէ տկարացաւ
ինչ , ոչ իւրոյ էութեանն այն պատահար ,
ոյլ կրից զգայտականաց զգածեալ ամսլրոսլք :

Վիտք ոչ զբաղին ծփանօք ՚ի յուղմունս
փոփախականս և ՚ի սնոտիս , եթէ ոչ թելա-
գիր լիցին նմա յարուցմունք կրից , զոր սաս-
տել արժան է : Օ՞նունդ երեակայութեան՝

անցեալ զբացաստկանաւն՝ ՚ի դրականն իջանէ յանարդութիւն¹, յորմէ փրկեացէ զմեզ Աստուած : Ուստի յայսպիսեաց աստի ՚ի սրբել զմիտու, կամ ըստ ես ըստ Պատղասի², ընկղմել զմահկանացուս ՚ի կենաց անարի, յոյոր օգնեն և ազօմքը ընտրելոցն Աստուծոյ :

Արդ՝ ես որ զուրկ եմ ՚ի բնական և ՚ի գերբնական կատարելու թիւնէ, և կրիւք ըդ զածեալ յերեւութական փոփոխելիու, բռուրեմն վատահացոյց զմարդկային և զաւառածային խօսել, և զանձն ցուցանել կարող : Ես կարդացեալ զբան Պատկղի³, և կարողութիւն ամենայն էակաց՝ ՚ի միակ յշակէ, և ամենայն կատարելու թիւն յշակըն միակ ու, զամենայն ճիգն յուսոյ իմօյ ՚ի նայն Վիակն եղեալ, յինէն ոչ մի ինչ՝ ոյլ նովու, և ՚ի նմանէ ընդունել զկարողութիւն, նեցուկ ՚ի ձեռին և զաղերս որբացն առեալ, և խրախուսեալ ՚ի մարդարէութիւննէն Դաւթիւն⁴ բանամ զբերան : Եց ուրեմն զատ և Հոգի Աստուծոյ :

¹ Հոբելու. յել. 60.

² Լ. Պ. Պատկղ. շնչ. Ժ. 1. Ճ. 1. Ճ. 1.

³ Բ. Կողմ. Ե. 4.

⁴ Սշմ. 2. 11.

ՏԱԿՈԹԻՒԹԻՒՆ ԿԱՆՈՒԽ.

Ու յուշտ գերազնութեան հոսյ և լիկ ՚ի հաս-
բ-ին ին չկ' լ:

Օտառուածամերձ զօրաւթիւն իմ Տա-
նաշեմ ՚ի մարդ, և այն է միտք ։ Ե՞ր զայն
որ գիտաց գնող ընդ առաջնորդութիւնս
նորա հաւատարիմ։ Յենթալու անեայս որ
այն զօրաւթիւն՝ որ ՚ի մասնաւորաց քննու-
թենէ մինչև ցՄիտկն, և անտի ցատրակաց
բաւական ՚ի ժամանել, Եւ որ առաւելն է՝
զցանկալի տեսութիւն վերնոյն՝ (թէ և ըստ
Պաւլոսի¹, աստեն իրքեւ ընդ հայելի օրի-
նակաւ), զօրանոյ յինքն գրաւել, ՚ի նոյն
զմայլիլ, նախաւ պարարիլ, և ՚ի նմանէ ևս
քան զես սպայծառանալ, Եւ թէ ակարացաւ-
ինչ, ոչ իւրայ էութեանն այն պատահար,
ոյլ կրից զգայականաց զգածեալ ամսպրոպք։

Միտք ոչ զբաղին ծփանօք ՚ի յուղմաւնս
փոփոխականս և ՚ի սնատիս, եթէ ոչ թելու
գիր լիցին նմա յարուցմունք կրից, զոր սաս-
տել արժան է, Օնունդ երեւակայութեան՝

¹ Ա. Կոչ. Ձ. 4. 12.

սատան ոմն տեսանեմ 'ի մարդ , և այն է կիբբ , որ յզգալեացս զօրացեալ յարթնական յըմբռնմանն խանգարէ զկարդ տեսութեան մտաց : Անկնդիբբ սմա բազում , որք իբբ բարեկամի՝ հրամանաց նորա խայտալով գը նան զհետ : Ի՞նը զայն՝ որում ոչ լուաւ , և ոչ եթող նմա շփոթել զգեղեցիկ ճանա չումն բանին :

Ի՞ազումք 'ի բնախօսից զանազան ՚ի դէմն զսա վերածեն սահմանաբար , այլ ես հա ձեալ եմ Ասոյիկեանցն սահմանի . Ակրէ ամ բժիշո՞ն որդի իստրեալ 'ի բանէ ընտրեմ բնա լիւան :

Ենուր և անտեղի՝ Ախակն միայն . և թէ յամենայն տեղիս , և այն՝ ըստ աստուածա բանից՝ լըմամք . Իսկ ամենայն արարածք ու նին զտեղի . և թէ հոգեղէնք՝ սահմանաբար , և եթէ մարմին՝ պարագրապէս : Արդ՝ թէ և աննիւթ իմն ներդործութիւն , բոյց ու նի իւր տեղի սեպհական սահմանաբար՝ որ է երեակայութիւնն , զոր Ասոյիկեանք՝ սիրտ եղեցք՝ նշանակեցին :

Իսկ էականութիւն կրից՝ ամբովա՞ն . զի նոյն շարժումն է յամենայն եղանակու որու-

Թիւնս իւր : Խագոյեալ՝ ի բանէ . այսինքն ընդ-
գիմաշարժ ուղղութեան բանի՝ առուերարկ
լուսոյն՝ և խափանարար ներգործութեանց
նորա : Ի՞նչոր բնաւիւն , բնութիւն հանդչի ,
երբ տեսանէ զմիսո՞ իւր կառավար : Ի խոռ
վութեան և ՚ի վարանս յայնժամ՝ յորժամ տիւ-
րեն նմա կիրք : Եւ յայնմ բռնութենէ ընդ-
գիմակ զոմն իւրումն բարեկեցութեան ըդ-
գենու , զորմէ ասէր Պաւլոս¹ , « Տեսանեմ
այլ օրէնս յանդամս իմ՝ զինեալ հակառակ
օրինաց մոտաց իմոց » : Յանդամս իմ՝ ասէ ,
այսինքն յերեակայութեան , յորմէ շարժին
զգայական բաղձանք : Հակառակ օրինաց
մոտաց՝ ասէ , այսինքն գիմամրցանակ ճշմար-
տառեառութեան բանին : Եստի յայսմանէ
քանցեմք զայս ճշգրտութիւն , թէ այլ է
կիրք՝ որ հսկոյն զհետ երթայ ընտրու-
թեան , և այլ՝ որ յերեակայութենէ՝ զհետ
զգայականաց :

Ո՞ի շփոթիր դու՝ թէ ՚ի մարդ զերկուս
կիրս ծնուցանեմ : Տես , բնախօսք զկարո-
զութիւնս մոտաց յերկոտառանս արոհենն ,
բայց ոչ այն բաժանմանք զմիսոս բաղմա-
ցուցանեն : Ասպէս և մեր զկիրս ՚ի կրից

¹ Հայոց . Ե . 25 .

անջատել՝ ոչ զերկուս ինքնէ ակս ՚ի մի մարդ գոյացուցանեմք, և ոչ խակ զմի և զնոյն շարժումն կրից ՚ի միօրինակ տեսութիւն զօրութեան դադարեցուցանեմք։ Օ անազանեմք այս, այլ ՚ի միում զերկուսակ զօրութիւն։ զի ոչ որպէս զգայականին՝ իցէ և շարժումն հոգեկանին։ զի թէ էր, ապա միօրինակ յանկ ելանէին երկոցուն վախճանք։ Ի՞այց ոչ տեսանեմք այսպէս, զի որ ըստ մարմնոյն է խընդալ դիւրափոխ է, և վաղ ՚ի վերայ ածէ զզեղջ։ խակ որ ըստ հոգւոյն՝ անփոփոխ և անեղը, և զիղջ ՚ի նմա և ոչ մի։

Աիրք՝ մի պատկեր յերկուս զանազան դեմքու վերածեալ։ Աիրք՝ որ իբրև զծառ երկատեսակ պատուզո գիտաց բուսուցանել։ բարի՝ յորժամ զհետ ընթացաւ բանին։ չար՝ երբ յառաջեւաց քան զբանն, և բուռն եհար զզգայական երեւութականաց։

Ա ՇՐՋԱՂԵԴՈՒՆ։

Օ ջննդաբանութիւն Ա ովախսի կարդամք՝ յագեւելս տնկել Ա առուծոյ զդրախտ, և ՚ի նմա զծառ գիտութեան¹։ Դրախտ՝ զմարդն իմանամ, արեւելք՝ զմիտս, ՚ի նմին զծառ գի-

տութեան՝ զկիրս, որ պարտաւորի միշտ հայել
յարեւ՝ այսինքն ՚ի հաճոյս մտաց . զի զոր մի-
անգամ ստեղծ Տէր, և ահա բարի են յոյժ .
վասն որոյ ասէր Վովուէս՝ Գիտութեան բո-
ըոյ : Իսկ լուն ասելն, այն՝ յորժամ մարդ
յզդալիս անձամբ անձին թողու թաղիլ կը-
րից : Օ ՚ի ոչ եթէ Աստուած բուսոյց զչարն
յերեակայութեան, քաւ, ՚ի բաց տար .
« Կորուստ քո ՚ի քեն է Իսրայէլ »¹ . այլ
յարտաքուստ մուծաւ, և այն՝ անձնիշխան
հաճութեամբ չարասիրին : Եւ ահա ՚ի ձե-
ռըս կրից մնան պտղաբերութիւնք չարի
և բարւոյ :

Արդ՝ եթէ ՚ի մարմնականս հակեսցես
զկրից վերել, արկեր ընդ խաւար զմտաց քոց
զտեսութիւն, և այնու հետեւ համանգամայն
ամենայն անձն քո ընդ խաւարաւ : « Օ գոյշ
լեր, ասաց Տէրն, լսող որ ՚ի քեզէ՝ խաւար
է, խաւարն որչափ ես »² : Վասինքն՝ զգու-
շացիր յորժամ շարժին կիրք քո, զի մի խա-
ւարեցուսցէ զմիտս քո . զի թէ խաւարեսցի,
խաւարն որչափ ես . այսինքն՝ որչափ առա-
ւել ես ընկղմի անձն քո ամենայն յաղջա-
մըլքին խաւար :

¹ Ուշէ . Ժ.Դ. 9 :

² Մատթ . 2 . 25 :

Ե կրից պառուզ չար՝ Ատոյիկեսնք ետաւն
սահման՝ բառանել։ Ե կրից պառուզ բարի՝
կանոնաւորեալ ՚ի մտաց՝ Շեմականք ։ Ուք
դարձուք ՚ի բաժանումնեւ ։

Յ-Ն-Դ-Ի- Բ-Ե-Ն-Ն-Ն- Հ-Ե- ՚ի Հ-Ա-Վ-Ր-Ա-Խ- ։

Երկու են բաժանարար ներգործութիւն
կրական որակութեան ։ մինն՝ Երեսյի հանգիստ,
և միւսն՝ ճշմարդիս հանգիստ ։ Առաջինն միշտ
խոսորեալ ՚ի ճշմարտութենէ և պատրանաց
տաիթ ։ խել երկրորդն հանապաղ ուղղու-
թեան տեսանող՝ և ընթացակից մտաց ։
Երդ՝ նուխ ՚ի վերայ առաջնոյն արժան է
մեզ խօսել, և ապա վերկրորդէն ։

Եւ խնդրելի է՝ թէ զի՞նչ իցէ երեսյից
հանգխօսն, կամ երեսյիթ ցաւն՝ ըստ առա-
ջին բաժանմանն ։ Ատհման, ե շորժութ կը-
ին՝ ընդունեալ յորդադին շնուրեց, և հայեալ ՚ի
դուրիելու ։ Այս շորժմանք զօրացեալք ՚ի
ներքո՝ ՚ի վասն վերջանալ հարկաւ դադա-
րեն, եթէ ոչ ապաքինեցին յուղղութենէ ։
Ա տն զի զմարմնականաց բաւոն արկանէ ։
և յայն սակա ՚ի բաժանման՝ Երես-Եւիսն ե-
գաւ ասորքերաւթիւն ։ Եւ որ ոյն առար-
կայք՝ յորոց գիտաց զարթնաւլ ոյս ներգործ
մոլիք ։ Համանգամայն խօսելով՝ առարկայք

զարթուցիչք երեւութականի՝ թէ հանգըստ
տեան և թէ ցաւոց, Են վախոխական յա-
ջողութիւնք և այլայլտկան ձախորդք :

Եւ ահա ընդ այս երկու սեռականագոյն
տեսութիւնս՝ բազմանան առարկացք տե-
սակաւորեալք, յորոց շարժեալ կիրքն Երե-
ակայական՝ եղանակաւորի ՚ի ցանկալ, ՚ի
ցամնուլ, զորս ՚ի մետասանս բնախօսք բա-
ժանեն, զորոց չեք մեր կամք խօսիլ, իսկ թէ
դու ցանկաս, վազվաղեա ՚ի տեսութիւն
մանրակրկիտ հետազօտութեան՝ բարոյական
մասին Փիլիսոփայութեան¹ : Ո՞ք դարձ-
ցուք յառարկական բաժանումն մեր . և
նախ՝ զվոխոխական յաջողութենէ, որ և
երեսյթ հանգիստ, ըստ տուչութեանն Առ-
տուծոյ խօսեսցուք զորպէսն, գլխազրելով
և վարդապետելով :

¹ Հայութ. Դ. յԵլ. 185 :



ԴԱԼԻՄԻՆ ԱՐԵՎԵԼԻՆ

ՈՐ ՑԱՀԱԳՍ

ԵՐԵՒԱՆԹԸՆԵՐՆ ՅԵԶՈՎՈՂՈԹԵՐՆ

THE HISTORY OF THE

AMERICAN REVOLUTION
BY
JOHN LEECH,
OF THE CROWN AND STATIONERS' COMPANY.

WITH A HISTORY OF THE AMERICAN REVOLUTION,

BY
JOHN LEECH,
OF THE CROWN AND STATIONERS' COMPANY.

WITH A HISTORY OF THE AMERICAN REVOLUTION,

BY
JOHN LEECH,
OF THE CROWN AND STATIONERS' COMPANY.

WITH A HISTORY OF THE AMERICAN REVOLUTION,

BY
JOHN LEECH,
OF THE CROWN AND STATIONERS' COMPANY.

WITH A HISTORY OF THE AMERICAN REVOLUTION,

BY
JOHN LEECH,
OF THE CROWN AND STATIONERS' COMPANY.

WITH A HISTORY OF THE AMERICAN REVOLUTION,

BY
JOHN LEECH,
OF THE CROWN AND STATIONERS' COMPANY.



ԳԱՅԻՒՄ ԵՌԵՎԱՆ

ՈՐ ԵՐԵՒԱՆ ԹԱԿԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՅԱՅԱՀ ԴՐԱՀԻ ՅԱՅԱՀ ԲԵՆԴ :

ՊՍՍ որում արարած՝ շիք ՚ի ներքոյ երկնից յամենայն տեսակու տռարկացից անփոփոխ յաջողութիւնք . և որք ենն՝ են ՚ի ներքոյ անկեալ ապականութեան . « Ամենեքեան իբրև զձորձս մաշեսցին ^{ո¹} : Իսկ որ ինչ ՚ի վեր քան զբնակութիւնս . այս՝ և նորա ՚ի բնութիւնս իւրեանց ՚ի սահմանեալ ժամանակին ընդ վասիստութեամբ . « Փոխեսցես զնոսա և վախեսցին ^{ո²} : Օ որոց երանելին Պաւղոս . « Վալարեսցես զնոսա , ասէ , և գալարեսցին ^{ո³} : Իսկ Պետրոս՝ ո բնութիւնք , ասէ , հրդեհեալ հաղիցին ^{ո⁴} : Օ յիմոսա ըաւ-

¹ Աշ. ՏԱ. 28 :

² " անդ :

³ ԵՒՀ. Ա. 12 :

⁴ Ա. ՊԵ. Պ. 12 :

նիս բացատրելով մեկնե՛ Սարգիս՝ այսպէս .
և Յայլ իմն կերպարանս փոփոխէ՛ գեղեցիկո
և վայելու չը ո՞ :

Այլ դու թող զվերնականս , եկ՝ զհետ
ընդ քեզ լիցուք միայն զարարածովքս՝ որ ՚ի
հողագնդիս , և զնոցունց ծանիցուք , եթէ
զիարդ իցեն փոփոխականք , և որ մեծն է՝
առականացուք :

Երևան առաջինից յշշշ-թեանց . և ինչ-ին-թեանց :

Օսոկի տեսանեմ առարկայ կրից՝ իբր
երեսոյթ հանդիսատ , և անփոփոխ ՚ի յաջողու-
թեանս՝ ըստ գոյացութեան , զի է անապա-
կան ՚ի պարզ ըմբռնման , ծանրագոյն ՚ի կշխա ,
և հարստագոյն ՚ի ծաւալական յատկու-
թեան : Ուստի ուսեալ ՚ի կրից՝ և համարիմ
թէ ՚ի ցանկալնմա ստանուալ զնա՝ արդարա-
նոց կիրքն , ըստ յանապականն ձգելոց զշար-
ժումն իւր . և որ առ այնպիսիս՝ մերձենայ
և առ ամենամաքուրն ըստ փիլիսոփայից .
Տայց այսօրէն ուսուցմանք նորա փութով
նպատրեն զմիտս , որովհետեւ յարի ՚ի կեզիառ
նըս սուտ ընտրութեան : Քանիզի զի՞նչ ոս-
կոյն հանք , եթէ ոչ երակ երկրի . որ ծը-

Ա
նունդ նորա , եթէ ոչ արգանդ հօղոյ , ուստի
սնունդ նորա , եթէ ոչ ՚ի տապոյ արևու :
Երդ՝ որ յայսալիսի բաղադրութեանց և յոյլ
եղանակու որութենէ ունի զիախումն գոլոյ
իւրում , ապականացու է և եղծական : Եւ
որ ՚ի բաղադրեալը և յեղծականս յարեցաւ ,
յանբաւս հեռանց յանբաղադրելի Վիտ-
կէ՝ որ է ինքն Վատուած :

Ի միոջէ տասի սկեզիր տռարկութենէս
բարւոք իմանաս , եթէ որ ՚ի հօղոյ՝ յոչ դոլոյ
զանգեալ և ՚ի գոյ արտադրեալ , փոփոխա-
կան է և կորսուական . տպա և ամենայն յա-
ջողուածք նոցա՝ անկայուն և դիւրաթառամ .
« Վիտնայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խո-
այ . խոտն ցամաքեցաւ ու , և ոյլն : Փառք
ասէ զայնոսիկ՝ որք փոփոխական են դոյտէ ,
և զայնոսիկ՝ որք ունին զհամարումն յաջս
մերոց կրից : Եւ սոցին յաջողութիւնն ո՞ր :
Յաջողութիւն իմա տառէն մի զմիով գե-
րազանցեալ արժանատապատուաթիւնն՝ որոց
ետուն մարդիկ զընարութիւն , որպէս ոռ-
կուց , ականց , մարդարտոց , և ՚ի սոցա սակի
եղելոց , և օրոց՝ որք ՚ի խոնարհագոյն առ-
տիձանի : Եւ ևս իմա յաջողութիւն զայն՝

որք ՚ի վայելսութեան ունին զսոստ : Արդ՝
եթէ կիրքն ըմբռնեսցի շարժմամբ ցան-
կութեան յարիլ ՚ի սոսա՝ խոչ է բանին , և
հարկ է սասառել ամբարտաւան հետազօտու-
թեան կրից . ապա թէ թոյլ տացի , ողջոյն
և զսնձն ՚ի վափախելիս յարեցուցանէ , և
ստագաստ ձգեալ ընդ մեջ՝ ըլոցուցանէ
զմիստ ՚ի աեսանելց զԱստուած :

Մարդ ոք՝ որքան և կար , եթէ յանիու-
փոխն շարժեաց վկիրս , չէ հեռի յԱստու-
ծոյ . և Աստուած իսկ սու ոյնապիսիս՝ զմեր-
ձաւոր լինիլն յայունէ . « Աստուած մերձա-
ւոր եմ ես » : Հեռանոյ յայնժամ՝ յորժամ
հեռանոյ կիրքն ՚ի մասց ուղղութենէ :

Երեւութական յաջողութիւն առ համե-
մատութեամբ անփափիսելոյն՝ իրք զյարդ
առ ցորենով ¹ : Եւ ամենայն յաջողութիւն
եղծական՝ դարձուցանեն զմիստ ՚ի ծնէ կո-
րութիւն , որք զգոյն ՚ի գունոց զանազանել-
անզօրք , ըստ Աստագիրացւոյն ² : Ասղոմնն ա-
սէ . « Արոց ոչ զոյ առաջնորդութիւն՝ թօ-
թափին իրրել զաերիւ » ³ . սցսինքն՝ ուր ոչ
իցէ սուաջնորդութիւն բանին , անդ ամե-

¹ ԵՐ. ԻԳ. 25:

² ԵՐ. ԻԳ. 28:

³ Դաստ. ԱՆՀ. յԵՐ. 7:

⁴ ԱՆԴ. Ժ.Ա. 14:

նայն ինչ կորուստ : Այսպէս կորեաւ և
Յուղաս, զի զկարգ պաշտաման՝ կիրք ար-
ծաթսիրութեանն կուրացցց , և փակեաց
զաշա մասց նորա շահսանել զուզզութիւն :
Այսպէս և Պիղաստախն զդաստաստանական
զիրաւարարութիւնս խախանաց . զի կշխք
արծաթոյն բազմացան առ նա ՚ի հրեից , և
կիրքն շարժեալ ՚ի բազում դիմաց , արկ զնա
՚ի մոլար դաստավճիռ . թէ և զինչ ասէր ,
և ճշմարտութիւն ո² . ոյլ ոչ ետուն թոյլ
դիսել նմա՝ յարուցմունք կրից : Վայն ար-
գարե սոքա զյաջաղութիւնն , մինն՝ արծաթոյ ,
և միւսն՝ արծաթոյ և իշխանութեան . բոյց
մինն վաղվազակի՝ և միւսն ոչ յետ բազմաց
ինչ աւուրց՝ տեսին զփափախութեան և զե-
րեւութական զանոտի պատրանո կրից . զի
ամենայնն էանց վաղագոյն , և ՚ի կորուստ
մեծ մասնեցան :

Օքունութիւն կրից՝ Առաքեալ նմանե-
ցուցանէ խմարոյ . “ Փոքր մի խմոր զամենացն
զանդուածն խմօրէ ”³ : Փոքր մի՝ ասէ , ոյս
ինքն՝ ՚ի միանգամին շարժել կրից առ ապա-
կանացաւս . ՚ի միացէ անոտի ամենայն անձն

¹ Ըստ . ՚ի իւն . Աւագ առ : ³ Ա . Կորն . Ե . 6 :

² Յով . Ժ . 58 :

և գործ գրաւի յապականաւթիւն : Եւ չեք
ապականութիւն՝ որ չունիցի զարմաս յա-
պականացուաց . « Յապականացուացն է
շարութիւն », ասէ ‘Դաւիթ անյաղթ’¹ : Եւ
առ ՚ի չիրդովել զմիտս յայսպիսեաց ասոի ,
հանձարեղբանիւ ՚ի պատրուակեալ կշամէ-
բանս խրատեաց Տէրն մեր զայրն ժողովեր-
դական . « Այր գու՝ ո՞ կացոյց զիս բաժա-
նաբար ՚ի վերոյ ձեր ո՞ : Տեսանես՝ եթէ
զիտրդ ոչ ընդ մեջ մոտնէ , և ոչ իսկ կամի՝
թէ և մեք շարժեոցուք զկիրո ՚ի վախոխելիս
յաջողուած : Յաջողեցաւ առնն ժառան-
գութիւն իւր , բայց խոտան համարել զայն՝
սաստէ Տէրն . զի ծնունդ մոտց ուղղու-
թեան՝ չէ յապականացուաց . « Դիմէի ոչ
զնա՝ թէ ծնունդ իցէ սոցա ո՞ : Այսինքն՝
դիմեմ , ասէ , եթէ մոտց ուղղութեան
ծնունդ՝ ոչ է իրրե զծնունդս կրից :

Տէր ուրեմն զու ՚ի խորհուրդս քո ու-
ղեղ , և մի ընդդրկեր զելս անկայուն , զի մի
՚ի վախճանի դացես զքեզ ընդ եղծականս՝
եղծական : Եւ յամենացն շարժմունս կրից
արթուն սլահեա զմիտս , և կործանումն ոչ

¹ Սահմ . յլ . 203 :

² Կմադ . կ . 12 :

³ Կմադ . մ . 14 :

Հասցե քեզ : « Պահանկակատ շինուած , առ
սէ Արքաք , ՚ի ժամանակի շարժման ոչ կոր-
ծանեցի »¹ . Եյսինքն՝ այնպէս պետել ըդ-
մէջս , մինչ զի բռունք եռանդունք ՚ի շար-
ժին փափաքանօք առ խնդրակս , ոչ կարառ-
ցեն խախտել ղճաստաստթիւն բանին , զի
՚ի վերաց հիմնն է և ոչ աւազոյ² :

Օքազումն աեսեալ է մեր , որք յոսկիս
և յատացուածս եղեալ զցանկութիւն կրից ,
և տակաւին ՚ի կենդանութեան իւրեանց
և անանկացեալք : Եղծական յաջողութիւն
եզծէ զյաջողութիւն , ասաց՝ որ ասացն :
Եղա ուրեմն չէ պարայարիւ ՚ի նոսա . « Օք
եթէ հաստատեցես զակն քո ՚ի վերաց նո-
րա , ոչ ուրեք երեի »³ :

Իոկ թէ ասիցես դու . Եղա կեանք մար-
դոյ որո՞վ զօրեսցէ կեալ , յորժամ ոչ ելցէ
ոսկւոյն ՚ի խնդիր , և ոչ զփոյթ ունիցի ըգե-
նմանէ : Եւ ես ասեմ . զբաղին յապրաւսն՝
արասոքին իմն է , և վասն մարմնոյ և եթ .
ուստի վասն մարմնականին միոյն ստանալն
զայն՝ չէ անդէսլ . այլ ուղղութիւն տռնն
յայսմիկ մասին երեի , որ ոչ ՚ի դանձեն

¹ Ակք . ԵԲ . 19 :

³ Աւազի . ԵԳ . 3 :

² Մատիլ . Ե . 25 :


խնդաց , և ոչ՝ ՚ի կորուստնելն ելաց , և այ-
լայլութիւնք կրից ոչ ամբոփեցին զնա :

Ոսկի ըստ որում էակ՝ բարի , բայց ա-
ռիթ կորստեան նոցո՞ ոքք կրիւք բերին ՚ի
նա : Այր կատարեալ գիտաց եթէ յաջո-
ղութիւն նորա՞ երեւթական և զնացա-
կան . գիտաց ևս՝ թէ ՚ի գալն իւր աստ ,
չեր նա յիւրում բնութեան էացեալ . վասն
որոյ վկրից իւրոց շարժ առ անշարժն միայն
եղ , և ՚ի նա ուրախացու :

Յամբողջացուցիչ մասանց՝ ևթէ մինն
վանդեսցի ՚ի բոլորին , ոյս՝ ոչ եղծանի է-
ութիւն բնութեանն , բայց արատաւոր
առնէ զգըութիւն բօլորին : Խոկ յորոշիլն ՚ի
միմեանց ֆիզիքական մասանց՝ զաեսակացե-
րյն զանհաս ապականէ , և կորուստնել ըդ-
Պաւզան անձնական՝ ՚ի Պաւզա անհաստա-
թիւնէ , և խափանի էութիւն մարդոյ յանհա-
տըն Պաւզա : Այսպէս և զֆիզիքայն , ոյսինքն
զներդործութիւն կրից անջատեցես յեր-
կուս ծառայեցուցանել , մեռանի այնուհե-
տե կիրքն : Եւ որ ոյս զատանել : Վեզեցիկ
վարդապետէ Տերն մեր . « Ոչ կարէք , ասէ ,
Կառուծայ ծառ այել և մամնացի » : Օքը

Եթէ միայն մարմնայն ետուք ծառ այս թեան,
ոյս՝ մարմնապէս արատ ընդ բիծ տռ ժա-
մանակ մի վայելէ , բայց ՚ի վախճանի ան-
փրկանաւոր մահ : Իսկ եթէ Վասուծոյն ,
թէ և անձկութիւն ինչ յըզգալեացո բըռ-
նագառեալ կրեսցէ , ոյլ յետ փոքր կեն-
ցազցու արժանաւորի զանվերջանալի պատկն
աւրախութեան վայելէ :

Վահին հանգիստ՝ զակին ՚ի ձեռս ու-
նել , և անտի մինչ ՚ի թաղելն յարկեզ . իսկ
այնուհետեւ անընթերելի հոգ և տաղասոյ ,
Եթէ մթերել և ես՝ ուստի յաջողեսցի : Որ-
ուաւորականին հնազանդ եցուցանել զիկրս՝
մեծ իմաստութիւն , մինչի Պատասնի ևս ՚ի
կրթելն զաշակերտ իւր զիմէսդորիէ՝ վկացել
թէ « Վասպիսի բարի ոչ երե եցաւ երբեք » :
Վասիլիքն՝ շիք բարի ՚ի վախճանելիս . և բարի
միայն՝ ուղղութիւն մասց , որ երե եցաւ՝
ասէ , ՚ի բնութիւնն մեր : Ուստի և զկրից
կատ չէ արժան ձգել զանցաւորօք :



ԵՐԵՒԱՆԻՑ ԹԱԿԱՎԵ - ՀԱՅԳԻՒՑ

Տ

Ի ԳԵՐԱՎԵՎՈՒՅՈՒ ՓԱՓԱԽԵԼԻ ՅԱՅ. ՅԻ. ՅԻ. ՅԻ.

Ուծութիւնը յաշխարհի տառ յեցեալ
յենթակայս բանաւոր՝ որոշեն զետաս 'ի խր-
ռան բազմութեանց 'ի յասկեղ երեկու-
ցու մե՛ 'ի յարդ և 'ի պատիւ + օրում ցան-
կան բազումք՝ ուր ոչ է . Այս օյս բազումք՝
ում ցանեկացուն , կործեմ թէ խառարեալ
ունի զմիսս յերեակայական պատիւ զօ-
րութեանց կրից + օրոց ոչ ցանկու և ոչ խոկ
զնեալ լինել մարզէ զմեզ բանն 'Վաւթի +
և Ուծութիւն թէ տուիւ զոյցէ + մի յա-
ժարեացին սիրոք ձեր և :

Եսոց զանազանել որժան և զառական
և զմիրոցեալ զեզադ 'ի տարրերաւթիւնա
բաժանաբարութ . Օք է մեծութիւն իմն ,
զոր թագու որութիւն անուանեմք , որ ոչ է
'ի հասարակի ինչ զիստան , այլ 'ի սերնոց ոց
անոր ունի զատչորդ ականաւթիւն + զորմէ
ոյժմ անկաւուր ունիմք խանել :

Տես զու տառէն զթագաւորականդ մեծ
ծութիւնն որտեղաշտոք իմն և դավա թեսն
արժանաւոր երեխ յայտ տեսողոց ։ բայց
զիւրեղծական է և ժամփախելի հանգիստ ։
այնքան մինչեւ առել համարձակիմ՝ թէ և
ոչինչ ։ Խայց կացցել զա՞ (թէ իցել յերա-
ւանն և յարդարութիւնն ։) ՚ի պէտա համա-
րակոց խազազութեանն ։ Եւ զայտ ու վճռե-
րայ ինչ ։ քանզի որ ստեղծն զմեզ՝ առաւել
սիրել զի ունիցիմք զիս միայն ՚ի վերաց մեր
թագաւոր ։ յորմէ երրեան հրաժարեցու-
խարայէլ ։ և ՚ի խնդրելի զփոփախականն թա-
զաւորութիւնն ։ զայրացեալ Վրուստն՝ տ-
ակը ցԱլանուել ։ և Օ խս մերժեցին շթառոց ու-
ւորել ՚ի վերաց նոցտ ա' ։ Տես ուրիմն եթէ
այսպիսի մեծութիւնն չէ ինչ և ոչինչ ։ Վրու-
ստն եթէ կիրք սնիստ այ բանին ունկն զիցել ։ հեշ-
տին խմանոց ։ թէ այն վերացեալ տեսութիւնն
եղեր՝ ժամփախական է և անկայուն ։ և ոչ
այնքան համեմելի Վրուստն օյ ։

Օ քազում մա իմանամք ՚ի ուրբ զիրն՝
թէ զիսրդ իրրե զերադ ժամուս սնցին ։
և ժազփազակի կորեան ։ որը ՚ի կրից որտա-
ցեալք զշետ եղեն մետք մեծութիւնն ։

¹ ԱՅ ԲԹԱՓ ։ ԸՆ 7 ։

Ովկը Արքիմելէք . այս , որդի Գեղենի
տոն աստուածապաշտի . բայց ոչ յօրինա-
ւոր կնօշէ , որ ոչ խոկ ըստ վարուց նորա գիւ-
տաց գնալ . և կատաղեալ ՚ի կրից յաղագո-
թագաւորելոյ՝ սպան զէօթանասուն եղբարս
իւր ՚ի վերայ միամի միայ : Եւ մեծ եղեն չա-
րիք նորա , զօրս գործեաց նա . բայց յետ
սակաւոց ՚ի բորբոքեալ կիրս իւր՝ կիղաւ-
իրու զգմնիկ , և փշեաց զսդի իւր պիղձ՝
ճմելալ ՚ի գագամժն ընդ բեկորի երկանի .
« Եւ ընկեց կին մի բեկոր երկանի ՚ի վե-
րայ գլխայ նորա , և մանրեաց զգագամժնն
Արքիմելէքայ » :

Օ արմանամ եթէ զիա՞րդ ոչ ուստ . առ
՚ի Գեղենի , որ յետ յաղթելոյ Վագիա-
մու՝ իսրայէլ կամեր կացուցանել զնա թա-
գաւոր ՚ի վերայ ամենայն ցեղից : Ի այց տես՝
որսլիսի մասւորական ուղղութեամբ ՚ի ճըշ-
մարիան զկիրս ուղղէր , զօր և ՚ի մասիսաւ-
կանաց յետո կոչէր . « Ոչ իշխեցից , ասէ ,
եօ ձեղ , և ոչ իշխեացէ ձեղ որդի իմ . այլ
• Տէր իշխեացէ ձեղ » : Ուստի և Տէր ըն-
կալու զնա , և եկեղեցի սուրբ մեր գրեաց
զմիշատակս տօնի նորա՝ ընդ սուրբսն Ար-

¹ Պատր . թ . 55 :

² Պատր . թ . 25 :

առւծոյ ։ Իսկ Արիմելէք ըստ մօլոր կրիցն հետեւութեան , և 'ի խնդիր լինելն երկրաւոր թագաւորութեան , կորոյս ընդ նմա և զերկնային անփափոխն արքայութիւն :

Սովորոն յազագու ամենայն մեծութեանց սեռօրէն խօսի , և ասէ . « Հանդերձեալ է նորա իւր թես իբրև արծուոյ , և դառնայ ՚ի առւն վերակացուին իւրոյ »¹ : Այսինքն՝ մեծութիւնն ՚ի պատրաստի ունի ասէ՝ ըզթես ՚ի գախուատ իբրև զարծիւ սբալար :

« Եւ դառնայ ՚ի առւն վերակացուին իւրոյ »:

Տուն՝ աստ զգերեղման իմանամ , և վերակացու՝ զմահն . այսինքն՝ կամի ասել , եթէ որպէս մարդ ՚ի մահուանէ ըմբռնեալ թաղի ՚ի գերեղման՝ և յաներեւոյթս մնայ :

Այսպէս և ամենայն մեծութիւն ՚ի փոփոխական դօքութենէ՝ իբր ՚ի վերակացուէ դառնայ ՚ի առւն , այսինքն յոշնչութիւն :

Եւ որովհետեւ այսպէս , չէ սա ապա յաջողութիւն անկորուատ , որպէս և գեղեցիկ ասէ (Օգոստինոս . « Օ Բ է Տեր , զի սրբ զքե՝ քեմիչտ ցնծան . այլ ստորեայ արարածքս ընդ փափոխ ելեէջա՝ ընդ խոռոչութիւնս զուարձանան »² : Տես՝ որպիսի և զանակաւ յայսնէ

¹ Աշակերտ . 19 . 3 :

² Գիլլս իսուս . 6 . 9 :

զկրից արտուղին՝ ՚ի փոխիսելի մեծութիւնս, և զայնպէսն՝ խռովութիւնս ասէ : Իսկ յաջողութիւնն անփոփոխ և մեծութիւնն անխար՝ մի միայն զտեսութիւնն որ առ Եստուած՝ դրէ :

Եշխարհիս մեծութիւն՝ առ երեսյթս միայն յաջողութիւն, և որ ՚ի նոյն շարժական՝ ըստ ՚Իսութի՝ մեղսամած . « Եհամեղաւորք են և յաջողեալ է նոցա, կան և ունին զմեծութիւն աշխարհի ո¹ : Երդ և որ մեղսամած՝ է և մոլորեալ, և որ մոլորեալ՝ է ՚ի ճշմարտութենէ և հեռացեալ. և որ այսպէս, ապա զուրկ և ՚ի Վիոյն միայնոյ :

Սահմանարար համաբարդութիւնդ՝ զորձեւնարկեցի, ուղիղ է և անվրէպ . ուստի որպէս ոմն ՚ի սրբոց՝ զնոյն և ես ասեմ. « Փութա, մի՛հեղդար, դուցէ դարձեալ ընդ խաւար գնայցես ո² : Խաւարեցուցանէ արդարեւ կիբը զջահ լուսոյ ուղղութեան մըտաց, որպէս բազում տնդամ ասացաւ . Խնդրեա զթագաւորութիւն, բայց ուսիր նախ զեղանակն : Եւ ո՞ր այս եղանակ . մի դանդաղիք, հարց ցաերունական աղօթմն, և բարւոք իմանաս . « Եկեսցէ արքայսւ-

¹ Սլք. հթ. 12:

² Եպէլք. յեղան. ը.

Թիւն քո ա :

Օ արմանալի է հոյցուած աղօթիցս , զի
զԱստուած աղաչէ թագաւորելի վերայ մեր .
և կարի յիրաւունս . զի որ զԱստուած և
զթագաւորութիւննորա ունի ՚ի վերայ իւր ,
անցանէ զանցանէ քան զամենայն մեծու-
թիւնս : Եւ զամենայն արքայութիւնս աշ-
խարհի յատին գատափետէ . և արքայիկ ոմն
պսակաւորի , զի ստացաւ զամենամեծն տէ-
րութիւն : Պաւոս ասէ . “ Ոչինչ ունիմք ,
և զամենայն ինչ ունիմք ^{ու} : Երդարէ բանս ,
զի ըստ մարմնականին և ըստ աշխարհի՝ զե-
րեւութական փոփոխելի մեծութեանց և
ստացուածոյ ասէ չունել ինչ : Իսկ՝ զամե-
նայն ինչ ունիմք , այսինքն զԱստուած գո-
լով ստացեալ պարծի թէ ամենայն ինչ ունի :
Ի գիրս Ոգեաց ասէ (Օգոստինոս . “ Որ զքեզ
ունի՝ ունի զամենայն . իսկ որ զքեզ և զոռ-
սա՝ ոչ վասն սոցա ինչ , այլ վասն քո միայն՝
երջանիկ ու : Կամի ասել . եթէ ոք զԱստուած
ունի , ունի զամենայն . իսկ որ զԱստուած
և զփոփոխելի զմեծութիւն և զայլս , ոչ
վասն այսպիսի երեւութականաց լինի երա-
նելի , այլ վասն Եստուծոյ միայն , այսինքն”

¹ Մատթ . 2 . 10 :

² Բ . Կոդ . 2 . 11 :

զԱստուած ունելոյն ազագաւ : Վար ամենայն ինչ ունայնութիւն ունայնութեան , և ընդունայն ամենայն սուտ հաճութիւն կրից , բայ Ասղումնիք¹ :

Դաւադիրք են մեծութիւնք աշխարհիս կենաց և անձանց այնոցիկ՝ որք մոլեգնաբար զինի վազեն այնց՝ թելադրեալք ՚ի կրից . և զոր յօրժամ ստանան , յաչ մարդկան զմարմին սիրողաց՝ երեւլիք միայն երե ին , և համարին մեծ : Բայց ոչ և առ Աստուած նոյն սկզս . « Օ ի որ տռաջի մարդկան բարձր է , պիղծ է տռաջի Աստուածոյ ո² , ասաց Աստուած : Արդ թէ դու զմեծութիւն խրնդրես , պարտ է քեզ ուղղել զկիրս առ ծոյրն և առ պատճառ՝ որ է անփոփոխ , Առ ծոյրն ասացաւ . « Ետ որ սյսմ ցանկայ , (այսինքն մեծութեան ,) յօրժամ ՚ի ծոյրն հատանե՝ մեծաղես զուարձանայ ո³ , (այսինքն յԱստուած ուղղել) : Առ պատճառն ասացաւ , « Ո՞ի թողուր զպատճառն՝ (այսինքն զԱստուած ,) և պատճառ առ որաց՝ (այսինքն զգալի երեւթականաց ,) պաշտօն մատուցուներ ո⁴ : Բնութիւնն միշտ սիրէ յարիլ առ ձըշ»

¹ Ջ. Պ. Ա. 1:

³ Լ. Մ. Մ. Ա. 118.

² Պ. Պ. Փ. 2. 15:

⁴ Ե՛ն . Գ. Ի. Գ. 2:

մարտութիւնն , այլ յուղմունք կրից ընկլուզանեն զտենչներգործութեաննորա : “Հանեկոյ միշտ բնութիւնս բանական՝ գերադունի և առաջնոյ պատճառի հասանելու”¹ : Եւ ահա՝ որ զայս գիտաց , զանխախան ընկալաւ և զանփոփոխն մեծութիւն յաւիաենական :

Այս յարատեեաց այս ուղղութիւն ’ի Առառող , որ իբրև զամա երկուս ընդ ուղղութիւնս եզեւ . լքոյց զեա ասկա կիրք մոլար , և խաւարեալ ’ի Տշմարտութեանն լուսոյ՝ ընդ անյիշատակս թողտու . նա մանաւանդ՝ “Եւ մեռաւ Առառող յանօրէնութիւնն իւր ու , ասէ սուրբ գիրն”² :

Արեսողոմ աղաւաղեաց զկիրս , և առհրդեհել զբորբոք իւր՝ ձգեաց զձեռս և վերացոյց ’ի վերոյ հօր իւրոյ ’ի թագաւորել . և այնքան անիրաւեցաւ՝ մինչեւ անց զբնական կարգաւ , և ելյանկողին անսամբութութեան , և մերձեցաւ յիրաւունս հօր իւրոյ : Վախճանաւոր գիտումն սորա ’ի թագաւորել իմանան յոր աստիճան արիւնաշաղախ աղդապղծութեան արկ զնաւ : Այլ ’ի վախճանի կանուխ վերահասելոյ՝ զինչ :

Դարձրոցաւ այս՝ բայց ’ի գահ արեւ

¹ Յ. Ա. իմաս , Գլ. 8 : ² Ա. Մանուչ , գ. , 15 :

կական կաղնւոյն¹ : Ի՞ացաւ նմա դուռն
այս , բայց յերկրէ ընդ օդս՝ մահապատկ
թշուառութեան : Եւ հուսկ ուրեմն վիճք
վերակացուք նմա : Կրոյս զերկրաւորն , և
մերկացաւ զերինաւորն :

Վոլո մի ընդարմացեալ իբր զանփոփոխ
ինչ զարմանայցես ՚ի վերայ շքեղութեան
թագաւորութեան : Վո ոչինչ համարելիք
են ոյնք՝ առ բաղդատութիւնս երկնային
անփոփոխ թագաւորութեան : Առեցո ըդ-
կիրո քո յզդալեացո , և ահա նոյն անանց .
և Վըքայութիւնն Վատուծոյ ՚ի ներքս ՚ի
ձեզ է ո² :

ՎԵՐԱՑԵԱԼ ԵՐԵՒՈՒԹԵԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ

Դ Լ

ՓՈՓՈԽԵԱԿԱՆ ՄԵԾԱՌԹՈՒԽԻԿԱՆ՝ Ի ՄԱՍՆԵՒՈՐԻ

Եւա թագաւորութեան զանազան մե-
ծութիւնք երեին յերեայթս , զորս միահա-
զոյն կոչեմք իշխանութիւնս : Բայց է ոմն
իշխանութիւն հոգեւոր՝ իւրով պարագայինք

¹ Ա . Թագ . Ճ . 9 :

² Պէտք . Ճ . 22 :

գերազանցեալ, զորմէ չունիմք խօսել առաջն : Ե մարմնաւոր երեւութական՝ ՚ի բաղմամասնեայս բաժանի իշխանութիւնն . և զիւրաքանչչուրոցն ասել՝ ընդվայր տարժան մունք : Ուստի ՚ի մի բովանդակեալ զամենայն՝ տակաւ բանիւք տացուք և զամանեծանօթութիւն :

Ի ծառն Պարփիւրի՝ զաեռականագոյնն աւեսանեմք սեռ՝ զգացացութիւն . և զաեսականագոյնն աւեսակ՝ զմարդ : Ինդ սասրինն շաղկապեալէ վերինն, և սասրինն ընդ վերնոյն . իսկ միջանկեալքն համանդամոյն լինին սեռ և աւեսակ, զի որ ընդհանրագոյն՝ զընդիւրեւ փակեալն ՚ի աւեսակ խոնարհեցուցանէ, և ինքն աւեսակաւորի ՚ի վերնագունէն իւրմէ : Եւ այսու ըմբռնմամբ ընձիւզի ծառն տրամաբանական :

Արդ զաեռականագոյնն՝ ասաեն իմաս բգմապետական զանկախ աւերութիւն . և բգմապետականագոյնն՝ զհասարակ հպատակն որբուզ իշխեն երբէք : Իսկ զաեռ և զաեսակ զընդիւրական աստիճան և առ աստիճան ընդ իշխանութեամբ զկարգեալսն ծանիր . “ Ե՞ս այն իշխանութիւնն այսինքն արքայականն, է պատճառ այլոց ո . ասէ Կավլինն¹ : Ի՞սց

¹ Յաշ. Եղիշ. Լ դար. 253 :

մեր թողեալ զքննութիւն սեռականի և
տեսականի ՚ի տրամաբանութեան անդ ,
դարձուք ՚ի մեր տեսութիւն :

Եյտիսի ընդմիմետմբացուցիչ իշխա-
նութիւնիք եղծական են և դիւրասահ . զի
զոր ինչ վասն սեռականոգունին՝ այսինքն
թոգաւորութեան ասացաւ , թէ փոփոխե-
լիք են և երեւութական , զնոյն և զայսցանե-
գիտացես լինել :

Ենապական զանապական ծնանի , որ ան-
ժամանակաբար և յառաջ քան զամենայն
յաւիտեան՝ Արրօրդութեան ճանաչեմք
ծնունդ հօր՝ Արդի . և գաւանիմք ուղիղ և
ճշմարիտ խոստովանութեամբ , թէ Հայր
որբան Հայր՝ Արդի ընդ իւր անբաժանելի :
Եւ ահա անմահին՝ ծնունդ անմահ : Եւ
կիրք մեր թէ ընդ այս յառեսցին , զհոդիս
մեր տեսանեմք անմահ ՚ի փառաւ : Եհա քեզ
յանբազագրելոյ՝ անբազագրեալ ծնունդ :

(Ե՞ն ՚ի բաց տար , և մի թիւրեսցես ըզ-
միսս քո զանձառն ճառել և ասել , թէ կը
բեաց ինչ Եանն զբազագրաւթիւն ՚ի մար-
մանալն . քաւ , ոքանչելի է խառնումն ¹ .
այր վասն ըստ Գրիգորի աստուածաբանի

¹ Շառ . Մանկան :

վկայութեան համաձայնի և թէոդորոս քըռ-
թենաւոր, և ասէ . « Օքրն ոչ փոխեաց,
և զեղեն ոչ շփոթեաց » :

Եւ ո՞ր ծնող՝ որ յատականութեան ան-
կեալ ներքոյ, տեսեր եթէ ծնուռ զանապա-
կան ծնունդ : Եթէ տաես՝ մահկանացու ոմն
ծնաւ զանմահ ոմն . այս՝ մարդ զմարդ ծը-
նաւ, և բառ որում մարդ՝ երկորին խել ՚ի
մահ խոնարհեցան, բայց ոչ կրեցին զատա-
կանութիւն . զի ծնօղն՝ մաքրեալ Յատուա-
ծութենէ և անարատ և անտապական, և
ծնեալն՝ Յատուած ճշմարիտ : Ո ան որոյ
ծնօղն յանտապականութենէ ծնաւ զանապա-
կանն, և երկոցունց ևս ոչ իշխեաց մերձե-
նալ մահուն ներգործ, այն է՝ ոչ կարաց
լուծանել ՚ի հող : Եւ սյնալէս մինն ընդ
պետութիւնս յաջմէ ծնիցելոյն ՚ի փառա-
բանութիւն, « կացցէ դշխայ ընդ աջմէ
քումմէ ո » : և մինն՝ որ երբեմն և ՚ի տա-
ճար տուրբ իւրում « (այսինքն յարդանոդի
կուսին), ապա « յերկինս՝ յաթոռ աստուա-
ծութեան իւրում » : Տես ուրեմն՝ եթէ
զիարդ անտապականութեամբ մաքրեցելոյն՝

¹ Ճ. ի. դադ:

³ Սլ. ժ. 3:

² Սլ. ի. 10:

ձնունդ անապական . և որ անմահ նախ քան
զմարմնանայն , անմահ և յետ մարդանալոյն :

Արդ՝ որովհետեւ լուար անապականին
զանապական արտադրութիւն , եկ ուրեմն
և խոսափան լեռ ըստ իս , եթէ և փոփոխա-
կանին՝ փոփոխելի է սերունդ : Եթէ թա-
գաւորութիւն փոփոխելի և եղծական , ա-
պա և 'ի նմանէ ընձիւղեալ ամենայն իշխա-
նութիւնք փոփոխականք . զի նման զնմանն
ծնանի , առէ Արիստոտէլ :

Իմաստասէրք զբոլորի մասունս՝ 'ի նմա-
նամասունս և յաննմանամասունս որոշեն .
օրինակ . Ի մարդ բոլորի՝ նմանամասունք
երակք և մանրերակք . աննմանամասունք
'ի մարդ՝ ունչ , ականջ , աչք , և սցլն . զորս
եթէ ցանկաս բարւոր ուսանել , մերձիր առ
Դաւթի ստհմաննն , և սնդ տեսցես լիտին :

Արդ՝ իմ բանք այս են : Օ եղոդ փոփո-
խականութիւն՝ իբրև զբոլոր իմն ընկալ 'ի
միտս քո , և 'ի նմա նմանամասունք՝ արքայ-
ութիւն , իշխանութիւն , գատաւորութիւն ,
և որ այսպիսիք : Եւ ահա՝ որպէս էութեամբ
մի և նոյն երակք և մանրերակք , նոյն և սորա
նմանամասունք են 'ի փոփոխականութեան
եղեր բոլորի , և ամենայն ըստ էութեանցն՝
գնացական :

Եառաջադրյն բազումք, բայց թող դու
զանցեալս զնոսա, և եկ ՚ի մեր ժամանակս՝
տեսցուք ընդ քեզ այսօր, եթէ իշխանու-
թիւն քանի՞ ոմանց՝ անց ըստ պղպջակս չուց
և պայթեցաւ։ Ո՞ ի որ երբեմն իշխանու-
թեամբ պատռեալ, և զկնի տեսաւ իշխե-
ցեալ. և սակաւիկ մի ես՝ և կարօտ հացի։
Այսպէս եղծ է և անցական, նենդաւոր և
խարոշ՝ ամենայն իշխանութիւն մարմնեղի։
Եւ որում ոք յուսացաւն՝ փութալ ետես
զվերս ընդ ձեռս՝ եղեգնախացիմս ընդհա-
րեալ։ Եւ որ ոք յեցաւ ՚ի նա, ոչ փրկեցաւ
՚ի ցաւոց։ և Եւ յորժամ յենուին ՚ի քեզ՝
ելանեիր ընդ ձեռս նոցաւ։¹

Իսկ թէ դու առարկիցես ինձ, ենթա-
կային միոյն լինել գնացական, և վերացե-
լոյն՝ անփոփոխ և մնացական։ Եւ ես ասեմ
քեզ, եթէ որոյ ենթակային սպառի, սպառի
և վերացեալն։

Սախլիցես, թէ ՚ի մեռանել Պետրոսի՝
մարդկութիւնն վերացեալ՝ մնաց անսպառ։
Կրկին պատասխանեմ և ես, եթէ ընդ ան-
ցանելն ենթակայից՝ անցանեն և ոյն ամե-
նայն, ըստ հզօր վկայութեան երանելոյն

¹ Եւլի. 10. 7.

Պաւղոսի . « Խամբանեսցէ (Քրիստոս) զամենացն իշխանութիւնս , և զամենացն պետութիւն և զզօրութիւն ո ¹ : Օք նմա՞սյսինքն Քրիստոսի միայն վայելէ թագաւորել . և թագաւորութիւն մի միայն՝ յանմափոխելին : Եռ ոյս կրկին և Պաւղոս . « Օք պարտէ նմա թագաւորել ո ² : Եսա այսմ՝ և Դաւիթ . « Ելքայութիւն նորա՞աբքայութիւն յաւիտենից ո ³ :

Աւրեմն ՚ի բաց արա՞ և հան ՚ի բաց բզանկութիւն կրից քոց ՚ի նմանամասունք յեղծականացս . զի որ յաշխարհին էր իշխան , վաղու ևս արկաւ ընդ դասապարտութեամբ . « Իշխան աշխարհիս (այսինքն սատանայ և գործք նորա մոլեկանք ,) դասապարտեալէ ո ⁴ : Երդարեւ ՚ի դասապարտութեան և այն՝ որ վառաց աշխարհի և իշխանութեան աշխարհի մոլեգնաբար ըղձայ :

Կիրք յարուցեալք այսպիսի ներդործութեամբ՝ կայթէ ՚ի թիւնաթաթախ յերեսութից , կիցու անդէն արձակէ , և զտէր իւր և զաթոռ՝ ըստ իշխան Եղափրայ յերկիր կործանէ : | կամ նմա և մոհակ խրասու յա-

¹ Ա . Կրկն . ԺԵ . 24 :

³ Սլ . ՃԽԴ . 15 :

² Ա . Կրկն . ԺԵ . 24 :

⁴ Յակ . ԺԶ . 11 :

Ճախել պատկան , և կոպել և ճմել զկզակ՝
հարկաւոր , զի անասնական յարուցմունք
նորա՝ ՚ի նա խորտակեսցին , ըստ Յովեայն .
“ Հօյդ վայր եկեսցես , և ալիք քո ՚ի քեզ
խորտակեսցին ո ¹ : Ո՞ի թողուցուո խողալ
սովու , այսինքն երեւութական յաջողու-
թեամբ . սաստեա նմա ըստ եզեկանց գա-
զանաց , և կապետ զբերան սնոտի ըղձանաց
նորա , “ Ո՞ր առ քեզ ինչ ոչ մերձեսցին ո ² :

ՎԵՐԱՑԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՒՆՆ

Դ Լ

ԵՐԵԽՈՒԹԱԿԱՆ ՑԱԶԱՌՈՒԹԵԱՆՑ ՀԱՆԳԻՄԸ

Համակ զցանկալիս առ երեսյթո՝ հան-
գիստ վարկաւ կիրքն : Հյանկալի աստ զիտ-
վոխականս առեմ . քանզի կիրք յայնթամ
անմոլար՝ յարժամ ցանկայ անփոխիսելեաց .
Ո՞ր այս անփոխիսելիք . նախ՝ Ո՞խակն . ապա
ամենայն պատուիրանիք նորա . “ Եւ բանք իմ
ոչ անցանիցեն ո ³ . և տպա՝ ամենայն առա-
քինութիւնք բարոյականիք :

¹ Յովեա , 1. ը . 11 :

³ Արտիլ . 1. Դ . 33 :

² Աշլ . 1. Ը . 9 :

Վ. Ա. մեք զ՞րս դիտացուք զփոփոխական
ցանեկութիւնս , որոց միման կիրք բաղձայ
զհետ լինել : Փառամոլութիւն՝ որ մայր , և
գուսար սորա՝ պճնասիրութիւն , որոց և
թոռունք անիրաւք՝ ՚ի բաղմագիմի յախոս
բազմածինք : ՚Իսնզի՝ որ է փառամոլ , է և
պճնասէր , և որ պճնասէր , է և յնքնահաւ-
ան , որ նոյն է առել հաղարտ . և որ հաղարտ ,
է և բարկացող , յորմէ և ամենայն չարիք
բիւրատեսակք : ՚Իսնզի կիրքն որ միանգամ
գեթեց միտին վառամոլութեամբ , վաղ-
վազէ ապա սան առ սան յամենեսին գայ-
թիլ . « Եթէ միտի իւիք գեթիցէ , եղեւ ա-
մենայնի պարտական ո , առէ Վարքեալն » :

Ա. Ր. ՚ի միոջէ նախագիր առսակէ աստի
առ տարածական ձեռնարկութիւնդ , կամ
լու ևս առել ՚ի փոքուէ առ մեծագոյնդ ,
կարծեմթէ անիրէ պեղակացուցանէ , և ոյն
համարադ կանանաւ . ապա թէ ոչ սուտ
լինէր և վեսյութիւն Վարքելոյն բանի :

Փառամոլութիւնն քաղցր երեխ կրից .
ագահն միոյն քամահէ զայս ախտ , զի և նա
կայ թաղեալ ՚ի սառանացական գերեզմանին
(այսինքն է ՚ի կռապաշտութեան .) « Վդահ »

սրէ կոտապարփշտան¹։ Փառամոլութիւնն հա-
ճոյտկան ՚ի մարմառոր կեանս, և սիրելի մոլի
տարփանաց։ Ամա ախտացաւ նա՝ որ ընդ-
հաճոյս իւր եթող կրից գնալ։ Եղա ո՞ր սցա
յլուսուած մեզանչումն նորա՝ և ապաստի-
բութիւն։ Որպէս սմանց՝ նոյն և իմ տկար
տեսութիւն բանից զոյս և եթ իմանաց։
Երսուածաբանք՝ առաւօտեան և երեկոյեան
ճանաչումն ասեն լինել ՚ի հսդեղէն գոյա-
ցութիւնս՝ ՚ի վարձ։ Եռաւօտեան կամ ու-
ռաջին ճանաչումն այն է, որ ՚ի յեռութեան
Եստուծոյ նկատեալ լուսաւորեալք յերա-
նական յայնմ տեսութենէ՝ զապազայս սնէ
վրէպ ճանաչեն։ Եռաջին ճանաչումն ասի
առաւօտեան, վասն զի կոտարելազոյն ճա-
նաչին իրը՝ յաստուծացային երանացացիչ
տեսութեան և առէ Հարերու²։

Իսկ երեկոյեան՝ կամ մասնաւոր ճանա-
չումն է, մասնաւոր իմն յայտնութիւն յլու-
տուծոյ՝ որ սկիզբն ունի ՚ի զօրութենէ րի-
նութեան զիտաղին, (այսինքն՝ առանց տե-
սանելոց ՚ի յլատուած,) « Յինքեանս մաս-
նաւոր յայտնութեամբ և ³։

¹ Եթես. և. 3:

² Հաբերս. յեր. 38:

³ Հաբերս. յեր. 38:

Արդ՝ մեր թողեալ զմանաւոր ճանաչումն՝
որ և երեկոյեան ճանաչումն ասիւր, և առաջուք ՚ի ձեռս զառաջինն, որ էր առաւօտեան ճանաչումն. և տեսցուք թէ իցէ՞ ոյս վարձ՝ ՚ի հրեշտակս, և թէ՝ էր ՚ի սադայէլ:

Ո՞ր ոչ խտառվանեսցի թէ առաւօտեան լուսով չէր սադայէլ նախ քան զանկանին՝ ունել, զի թէ հրեշտակք ունին, նա՛ առաւել ևս իշխան նոցա, որով և ընդ հայելի ջինջ փոյցէր ՚ի տեսութիւնս Աստուծոյ, ըստ Գրիգորի աստուածաբանի վկայութեան՝ յի՞ւ որսն ։ Եւ Տէրն մեր տու, և Հրեշտակք . . . հանապաղ աեսանեն զերեսս Հօր իմց ։¹

Արդ՝ ահա ոյսու ճանաչողութեամբ առաւօտականին ետես սադայէլ զապագայ զառեղծագործութիւնն Աստուծոյ ՚ի յի՞ստուած՝ զմարդ, և զերկրպագութիւնս նոցա և զիտապանութիւնս՝ որ յանուն Աստուծոյ։ Անդէն ընդ աեսանելին և ճանաչել վազվաղակի խորհեցաւ զայն պաշտօն ՚ի մարդկանէ յինքն յափշտակէլ, և զերկրպագութիւնն և զիտապանութիւնն յանուն իւր գրաւել, և ծունք ՚ի մարդկանէ՝ յանձն

¹ Սահմանական գ. թ. 104.

իւր ամեսանել . և իբրեւ զԱյտուած՝ որ յա-
թօռ ամենակարսղութեան բաղմեռու , զա-
թօռ յափշտակել ամերութեան : Վայր բաղ-
մաց փոփոխականաց եթէ սահմանեցից ըդ-
սա , գոդ թէ ոչ սիսալեմ :

Ե փառամոլ կրից սահեցաւ և կորոյս զիւր
զպատկանաւ որ փառա՞նախկինն ոյն յատեղ-
ծուածո՞ներն զեղիս , (ոյսինքն է սադոյէլ) :
Որոյ՝ և որում ստամբակ կրիցն անիրտուու-
թեան՝ զնախատակոծ քարինս ատելութեան
արձակե Աբրամ ՚ի մարզ մերոց կրից , զի մի
առ այնպէսն շարժեսցի . « Երեք են զոր տ-
ուեց անձն իմ և գարշեցաց յոյժ ՚ի կենաց
նոցա . . . զալեւոր պոռնիկ և պակասեալ ՚ի
մասց ո՞ւ . ոյսինքն՝ զպակառեալն զոյն ՚ի հը-
րեշտակական փառաց : Ծուր՝ տաէ , զի յա-
ռաջ է քան զմեզ ՚ի ստեղծանիլն . պոռնիկ՝
տաէ , զի յախաս ըմբռնեալ մոլի մօլորու-
թեան՝ (ոյն է փառամոլութիւն), շարժեաց
զոռուա իւր , այսինքն զկիրս , և արկ յորակ
շարութեան զհամակիր նմանաքերս իւր ըդ-
ճաճանչունակ աստուածավայէլ և զայրց
զհրեշտակացն ընութիւն . որով և էջ ինքն
և իւր համախոհը յանդունդս անել , և յար-

գելանս անփրկանուոր : « Օ իսրայ անկառ
յերկնից արուսեակն՝ որ ընդ առաւօսն ծա-
գեր . անկառ ու ¹, և այլն : « Եւ տուան նորս
քարշէր վերրորդ մասն աստեղաց երկնից ² :

Երդ այս՝ նուրբ իմն տեսաւթիւն : Խայց
արժան համարիմ բացատրել թէ զի՞նչ այս՝
իշխանին դիւաց խորհուրդ կօրսաեան,
դնել զամոռ յամապ , լինել նման բարձրե-
լոյն : Միթէ այնքան յիմար գտաւ , զի ո-
րում ոչն կարող էր՝ ձգաիլ 'ի վերացումն
աստուածական էութեան : Միթէ ոչ զի-
տաց՝ եթէ արարած էր . և արարած որպէս
Երարշին յափշտակել կարողանացէ զէու-
թիւն : Եւ կամ՝ միթէ անդ էտ էր , թէ նո
զիտու իւր այլում ոչ տաց ³ : (Փառք տո-
տէն իմա զանքաժանելի համագոյութիւն
ամենասրբոյ Երրորդութեանն , որ անհնառ
բին է առաւելուլ կամ ողոկասիլ 'ի թիւս ,
'ի զօրութիւնս , և 'ի կարողաւթիւնս : Եւ
հ՝ փառք աստէն իմա զարարածոցս առ նա
օրհնութիւն , և աղդի բանականիս նմա եր-
կրտագութիւն և փառաբանութիւն , զօրս
ոչ կամի թէ բաց յիւրմէ այլոյ ումեք ըն-

¹ Եսայ . ԺԴ . 12 :

³ Բաբրահ . Դ . 5 :

² Յոյր . ԺԲ . 4 :

ծայեսցուք) : Կարծեմ թէ քաջահմուտ եր
այսոցիկ, և քան զլուսաւ սրութիւն գիտու-
թեան մերում՝ գերազանց պայծառացեալ
՚ի վերսց մարդկան, և տալ նոցա կարդալ
զանուն իւր Արարիչ, և կրել զաթու Ա-
րարչին : Ու ան որոյ՝ որոյ աշք բաց են յա-
մենոյն ճանապարհու արարածոց¹, ետես
զմոլար նորա զամբարիչո խորհուրդ, արկ
զնա ՚ի գետին . և յորոց ցանկացաւն պաշ-
տօն առնուլ, նոցին արկաւ ընդ ոսս կոխան
լինել, և ՚ի ձեռաց նոցա խորասկիլ գլխոյ
նորին . և ՚ի սպասեսցէ քում գլխոյ ո² :

Տուտ Աստուած զայս իշխանութիւնն մար-
դոյն՝ չափել զգլուխ վիշտապին աներեւութիւ-
նայց զգուշանալի է՝ չտալ առ զի շարին մեր-
ձենալ ՚ի գարշապարս, ոյսինքն շարժումն
կրից՝ ՚ի վասթար վափիսելիս շընթանալ :

Եւ ահա յայս միտ առաց սադայէլ, թէ ՚ի
դից զաթուն իմ յամակ և եղէց նման Աար-
ձրելոյն ո :

Աւրեմն ՚ի մեկնողական բացատրութե-
նէս յայսմանէ՝ խնդութեամբ իբրեւ զմեզու-
մողավեա զքաղցրութիւն սիրոյն Աստուծոյ՝
որ ՚ի քեզ, և զոհացիր զնմանէ : Եւ զայս ևս

¹ Երեմ. 1.8. 19:

² Ճննդ. դ. 15:

ծանիր, զի որ առ նա զերկրպադութիւն քո
և զիմառաբանութիւն՝ որովէս ոչ կամի նա
այսինքն Վասուած՝ այլում ընծայել, և զոր
կամէրն յափշտակել կորոյս, այսովէս և զու
չորաչար կրիւք այլում մի ընծայեր, զի մի
և զքեզ կորուացէ :

Վհա յայսնի եղեւ մոլորեալ իզձ չարին այ-
նորիկ. Աշ զոր երբեմն այլապէս, այժմ ծանօթ
եզեր՝ Եթէ սագայէլին բանիք յայսմ ցանկու-
թեան էին վերոց. և ոչ զէութիւն՝ յէութիւն
Վասուածոյ փախել. քանզի քաջ գիտէր նա, և
թէ է անկարելի և բնաւին անհնարին :

Ի վերոց հասե՞ր արդեօք նախաչարին կր-
րից մոլորեալ փառափրութեան. որ իբրե-
զՎասուած կամէրն պաշտիլ, անարդեցաւ-
քան զամենայն արարածո, և յերեսաց Վա-
սուածո, և ՚ի զմոխա չոփ խնարհեցաւ :
Ու բեմն և զու ՚ի մոլորեցուցիչ փառաց խո-
տարեալ՝ մի ձգեր զաշո կրից քոց յառիլ ՚ի
նասա, զի մի սասակագոյնս ՚ի փառափնդիր
բարձրութենէ գահամիմեսացիս : Աշ մի ՚ի
քեզ ելցէ բան Տեսուն, թէ ս(որպէս սա-
դայէլ յառաջն՝ նոյն) և զու կափառնուում՝
մի մինչեւ յերկիմն բարձրացիս, ոյլ մինչեւ
՚ի զմոխա իջցես ։¹

¹ Մատթ. Ժ. 25:

Լուսմ վասն Հերովդէի հարեալ՝ի հրեւ-
տակէ և որդնաղից սաստակեալ¹ . և ընդէլր .
անդ յայտնէ զպատճառն երանելին ² Առ կատ,
զի ասէ . և Ոչ ետ փառս Վատուծոյ ո : Յայն
փառս՝ յորում գտաւ զինքն Հերովդէս , մո-
լորեցաւ . ի կրից և անձին իւրում միայն շուք
եղ , և ոչ ետ Վատուծոյ . վասն որոյ պատմե-
ցաւ . ի կենցազս , և . ի յաւիտենին կեանս :

Վզա որ . ի փառս ոք զինքն ի մարդկանէ-
տեսանիցէ փառաւորեալ , և ոչ ժաղավեալ
զկիրս՝ անձին իւրում համարեացի զայն մա-
տուցեալ , դատի յերկոսին կեանս . ի շարա-
չար կորուստ : Ոյր ստկո ³ Դաւիթ յամենայնի
զփառս . ի մարդկանէ յորժամ տեսանէր ան-
ձին իւրում ընծայեալ , առ կշամքանս կրից
իւրոց՝ աղացէր զՎատուած աղաղակաւ .
« Վի մեզ Տէր՝ մի մեզ , այլ անուան քում
տուր զփառս »⁴ . և յոշինչ համարեալ զա-
մենայն , իւր փառք միայն զՎատուած ունէր .
« Վ. յլ գու . Տէր օգնական իմ ես , փառք իմ
և բարձրացուցիչ զլսոյ իմայ ո »⁵ :

Վրդ՝ այսպէս և քեզ առևմ առնել . եթէ
յիսիր մասին իցես . ի փառաւորութեան ,

¹ Պ. ործ . Ժ. Բ . 25 :

³ Ալմ . Գ . 4 :

² Ալմ . Շ. Ժ . 9 :

և 'ի պատկառանս պահեսցես զկիրս քո , զի
այս է փառաւորութիւն .քո՞ւ և ոչ այլ : Եւ ևս
կամբիս փառաւորիլ , մի՛ փառամոլիր , մտաց
ծառայեցո զկիրս , և ահա 'ի յայտնութեանն
Քրիստոսի վայելես աստուածուեսութեամբ
զանգուիսելին փառաւորութիւն :

ԵՐԵՒԱՆԹԱԿԱՆ ՀԱՆԳԻՄ

Դ Լ

ԵՎԱՆԱԿԱՆ ԸՆՉՈՐԱԹԻՄ

Օպքնասիրութիւն տեսանեմ կանան-
ցածին իմն ախտ , յորում և ծերծեքումն
և փափկութիւն , յորմէ և ծուլութիւն .
և անաի պաշտրումն 'ի գերեզման մարմնա-
սիրութեան : Վիտե՞ս՝ Եթէ զիարդ հաճոյա-
կան իմն ցուցանէ կիրք զայս ախտ , և այն-
քան՝ մինչեւ ընդ դասս տուաքինութեան
լինել տայ համարել այնոցիկ՝ որք 'ի նոսին
վայելեն , և բղձակախմո առնել զու ունողսն
զնոյն : Հարց ցկիրս , և վարդապետէ քեզ
'ի հզօրագոյն վկայութենէ . « Վատելէ
մարմին քան զհանդերձ ո՞ւ : Հարց ևս , և

¹ ԱՐԵՎԻ , Զ . 25 :

վերսափն քարողէ . Եթէ , առէ , ոչ սիրէք
Վասուած զԱպոմնն , ոչ զգեցուցաներ զնա
ի զարդս և ՚ի պՃնութմիւնո¹ :

Վասպիսի առաջորիութիւնը նորա մո-
լեկանք են , զի ոչ ըստ մոտաց խորհի զու զզու-
թիւն , և ոչ զեղանակն մերձենոց ճանաչել
Ճշմարտութեան : Ծերեղյթս դօրէն կապկի՝
ըստ մարդ շարժի , այլ ՚ի բանականութենէ
թափուր :

Վեզ առեմ ո կիրք , ընդէ՞ր ամենակարողն
յարապահելն ՚ի գրախոնէ անսի զմարդն ,
փախան լուսաղեստ պՃնութեանն զոր ո-
ներն յառաջադայն՝ ոչ զգեցոյց նմա զծիրա-
նիս , և զզարդս պՃնուգեղ զգեստոց : այլ
զմաշկեղէն : Վարմին՝ անտանկան տեսիլ ,
և որ ըստ մարմնոյն գնայ՝ հանգերձ նմա մաշ-
կեղէն . և որ ըստ հոգւոյն գնայ , գարձեալ
նմա հանգերձ (ըստ որում ՚ի մարմնի ,) մաշ-
կեղէն արժան . զի հոգւոյն զգեստ չիք . բոց ՚ի
ըստաւոր ակասութենէն Վասուծոյ . և չեն
նմա հանգերձ և զծականք և փախախականք ,
քոնդիւ և ոչ խոկ անմարմինն կարօսի մար-
մականի իմկիք պիտոյից . կարօսութիւննորա
միայն հոգեսորք , զի և ինքն և հոգի :

¹ Բ . Մկաց . թ . 22 :

Օգեցաւցաներ Եղիա զմարմին իւր մաշ
կեկու . բայց և այնպէս կրէր զկրկին ողի ,
ողի բանական , և ողի մարդարէտկան ¹ .
և իւրայ մաշկեկին ժառանգաւոր կացուցա-
ներ զլչզիսէէ ² , նմանաբերեալ զաշակերտն
ի վարդապետին վարս :

Մւր դու պըննասիրութիւն . ուր ըրջիս ,
և զիամրդ դառնաս ի փախուստ Վրիստոսի
յաշակերտաց : Եւ զի՞նչ սա . նոքա ունեին ,
ասէ , հրաման ի վարդապետէ իւրեանց՝ ոչ
ստանալ և ոչ ունել առ ճանապարհաւս ,
սյսմնքն յաշխարհիս . մի հանդերձ , մի
սպարկ , մի մախուղ , մի պղինձ : Եւ ոչ իսկ
կիբը նոցա՝ բաց ի Ծուդայէ ի փախոխականս
շարժեցաւ երբէք , մինչ զի և յողորմութիւն
աղքատուց ի պատահել պահու տալ՝ ի ծոցի
իւրեանց և պղինձ ոչ գտաներ . և Վրծաթ
և սակի ոչ ունիմ ³ : Եւ սյսու կենօք վա-
րեալ՝ և ոչ կարօտանային իմիք . « Ծորժամ
առաբեցի զձեղ առանց քսակի . . . կարօ-
տացայք իմիք ⁴ :

Առա էին՝ որք զլ՛սուած միայն ունեին ,

¹ Դ . Թագ . Բ . 8 :

⁴ Գործ . Գ . 6 :

² Դ . Թագ . Բ . 13 :

⁵ Կը-կ . ԵԲ . 55 :

³ Առարկ . Ժ . 10 :

որով և հալածէին զնոտիստեսիւ զերիու մ
թական պատրանս իմ . և որով զօրութեամբ
վատահանացի զգէմ ունել նոցա . փախաւառ
իմ հանապաղ ՚ի նոցանէ վազվաղէր :

Լուս զգիմունական եզակախախոսու մ
թիւնս . Այս բանք լիցին մեղ խրատ . որ
Վրիսասոսի եմք տշակերտ , և յատաքելական
կացեալ ՚ի կարդին աննման գտանիմք վա-
րուց նոցա : Պիճնասիրու թիւն ՚ի մեղ՝ ոչ մի-
այն հանգերձից մասին ունի զաեղի . այլ հ
որք մեծամուռթեան են առիթմք՝ նորօր և ո
յզիանամք . Կրաքաղձ պիճնասիրու թեան
հազք՝ շատ , և ահա մալորու թիւն . զի Վրիս-
տաս տերն մեր և զմիսյն վասն հարկաւորի
հանգերձին շաոյ հրաման հազալ . Այս վասն
հանգերձի զի հոգացք ^ո¹ . և հեթանոսոց
տայ զհոգն զայն : Ո՞ք ընդէ՞ք բաց ՚ի հար-
կաւորէն և զաւելորդացն ևս՝ ՚ի պիճնագե-
ղել զմեղ վարակիմք ՚ի հոգս : Ամացեմ ասել ,
և կասկածիմ . եթէ զացէ այսպիսի կրիք
կրկին հեթանոսանամք . զի եթէ լոկ հար-
կաւորին հոգ՝ գործ հեթանոսոց , ապա յա-
ւել և աւելորդացն՝ որոյ :

Օգեցաւ այս՝ Ասղումն զմարմնականս ,

¹ Արտիլ . 2 . 28 :

և յարեցաւ . ՚ի նոստ , ոյլ ահա նոքա մեր
կացուցին զետ ՚ի հսդ եռաց , և բնդ դատա
պարութեամբ արկին : Եւ փրկեցաւ ար
դեօք : Ա իսյութիւնք սրբոց ՚ի թէութեան ,
իսկ թէ տախցես՝ մոլորութիւն նորա յոյլ
ուստեք . և ես ասեմ՝ յղիութիւնք մարմնա
կանաց հարկաւ յայնպիսի կորուստ ածեն
զմարդ :

ՊՃՆասիրութիւնն զմարմնասէրս իբր ըզ
մագնիս ինքեւան ձգէ ՚ի հաճոյականութիւն :
Իսկ որք զիմիրս իւրեանց ՚ի դանդանաւանդս
ձմէեալ և զամենոյն զօրութիւնն նորա՝ հու
գւոյն ՚ի հրամանս հնազանգեցուցեալ , ոչ
իսկ թիւրեցան ՚ի շաւիզս նորա զի՞շտուած
կորդացեալ , զի գիտացին թէ սուտ պա
ճուճանք . և Օ գատա արս և զծանրաբեռն
կրիցս դանդաղութիւնն ու : Օ անբաքեռն
ասէ , այսինքն զանազան փափոխելիսն՝ որք
անթիւք , և իբրև զքեռինս կուտակեալ՝ ՚ի
վերաց մտաւորական ուղղութեան , հեղձաւ
ցանեն զզօրութիւնն հոքեսպտուզ գործոց .
և վախճանն չար :

ՊՃՆասիրութիւնն ընկերաւորի կանանց .
բայց կին զգաստ խմանոյ և թէ մօրն իւրաց

¹ Եսլ . Բան . ԶԴ :

Եւայի խոչ 'ի գրախտին՝ այլովքն հանդերձ
և սա երևեցաւ . « Դեղեցիկ 'ի ակսանել »¹ .
ասէ գիրն : « Դեղեցիութիւն պաղպյն՝ որով ,
ստանալն զնոյն գեղ պաղպյն՝ ունել (ըստ
արամաբանից) : Այդ՝ եթէ չէր պառազն 'ի
գեղ ստացման պահապարդեալ , գուցէ վա-
սըն տգեղութեանն ոչ անցանէր Եւա ըստ
պատուիրանաւն :

Տես ուրեմն զի առ զկիրս խարել շատ է
և եթ պահապարդութիւնն , յորմէ յորդո-
րեալ կրից՝ նախ զՏէր իւր և աստ զպշու-
ցեալս ինքեան մոլորեցուցանէ : Եւ ըստ
որում յօկղը ան ունդ 'ի պատուիրանապան-
ցութեան կեոջ գիպան այս պատիրք , զկին
խրատէ Պետրոս . « Որոց լինիցի ոչ արտո-
քուստ հիւսիւք և սոկեհուս ծամակալօք
կամ պաճուճեալ զգեստուք զարդ »² :

Կոցենի էին դասերք որք պաճուճեալ 'ի
պահապարդ պշրանս՝ զՄոտուծոյ որդիս ,
այսինքն Անթայ՝ մոլորեցուցին : Եւ սակա-
մոր պատիժ = Եւ հոգի Տեառն 'ի պարստղացն
և 'ի պարտեցելոց , և դարձան 'ի մարմին՝
այսինքն յանքան , և քան զտերանես անմուա-
գոյն : Եւ հուսկ ուրեմն հաս 'ի վերոյ նոցա-

¹ ՃԱՆԴ . Գ . 6 :

² Ա . ՊԵՐ . Գ . 2 :

սրամնութիւն բարկութեանն Եպոսաց ,
և հեղձան ՚ի ջուր մեծ :

Եղա չէ արժան մարդոյ՝ թէ կին թէ այր ,
զկիրո ընդ պահասիրութիւնս թաղել : Եթէ
կին է , և զրադի ՚ի նմին դեգերումն , դառ
նայ ՚ի գե , ըստ Ասրդոսի . ^ա Այնպիսին , ասէ ,
մարմնացեալ դե է ո¹ : Իսկ թէ այր՝ յառ
տու ածագուշութենէ զուրկ , զի աստու ածա
սկաշան խոտան համարի զփափոխելիս՝ ընդ որս
և զպահասիրութիւնն : ^ա Աքասպին մար
դոյս զարդ խոտելի է և արհամարհելի առ
մենցն իմաստուն և աստու ածաեր մըր
տաց ո² : Աքասպին մարդոյս զարդ՝ ասէ ,
ոյսինքն ոյն ամենայն՝ որ վասն մարմնաց և
վասն զարդ արելոյ զմարմին , և ոյնոքիկ ամեւ
նայն փփախականք և եղծականք :

Պահապիրութիւնն ոչ հանդուցանէ ըղ
կիրս , և ոչ իսկ զմուաց տեսութիւն , մար
մինն թէ և առ փաքք մի շքեղաւորի , և խոյ
տաց իբրեւ մանկիիկ ՚ի գեղունակ խնձոր կոր
մբափոյլ . բայց փութալ զզջոյ : Եւ ոյն
յորժամ զցցել կղակացն , խորսփիլ աչացն ,
զունաթափիլ շրթանցն , թարշամիլ դիմա
ցրն , և խոխափիլ առամանցն՝ տեսանիցէ :

¹ ՄԵԼ . ԿԵՐ . յԵՐ . 292 :

² ԱՆԴ . յԵՐ . 293 :

Եւ ըստ առակողի , « Երբեւ զինու ոսկի ՚ի քիթ խոզի »¹ , այսպէս և սղճնազգեատիկն լինել թարշամելոց , կամ լաւ և սահել անգեղեաց : (Տգեղ աստ ըստ հոգեւ որին խմա , և թարշամեալն ևս զնոյն) :

Ո՞ի եզրակացու ացես յառաջարկու թենէս , եթէ գեղեցիաց պղճիլն չիցէ ինչ անդէսլ : Դեղեցիկ զայն ճանաչեմ՝ որ հաշտ է ընդ Մարցին իւրում . և որ հաշտ նա մերժեալ իսկ է ՚ի կրից իւրոց զպճնասիրու թիւն , թէ գեղեցիկ ոք իցէ ըստ մարմնոյն և թէ տղեղ : Եւ որ գեղեցիկ ըստ մարմնոյն կամ տղեղ և ցանկացող պղճնասիրու թեսան , չիք քան զայն չարագոյն տղեղ , վասն զի հեռացեալ է ինքն Այսոււծոյ և Աստուած՝ ՚ի նմանէ : Ապա հեռանալ ՚ի պղճնասիրու թենէ՝ բարի , քան մերձենալով ՚ի նա՝ զ՛սառուած հեռացուցանել և միանալ չարի : Օի ՚ի հեռանալն Աստուծոյ ՚ի մէնջ՝ մեծամեծ խռափու թիւնք յառնեն ՚ի կիրս մեր , վասն որոյ տսէր մարգարէն . « Ո խռափեցուցանէ զմեծու թիւն ծովու »² : Այսինքն՝ յօրժամ մեք մեղանշեմք , յայնժամ Աստուած Եքեալ թողուզմեղ , և յողովէ առ ինքն զլոյս չնորհացն :

¹ Աշուկ . ԺԱ . 22 :

² Աշուկ . ԿԴ . 8 :

և ապա՝ ի ծով աշխարհիս՝ այսինքն՝ ի կիրս
մարդոց յառնեն խռովաւթիւնք անբաւք:

Դատ աստուածաբանից՝ խռովեցուցանելն
Աստուծոյ, չէ պարտ աստեն կոմ յայսպի-
սիս՝ ուղղակի իմանալ, այլ անուղղակի¹։
Օ, ի ոչ եթէ Աստուած է՝ որ մղիցէ զմեղ
՚ի մոլութիւն, քաւ՝ ՚ի բաց տար, այլ մեղք
մեր, վասն որոց և Աստուած թողու երթալ
զհետ կամաց²։ և այս է անուղղակին։
Եւ մեք յորժամ տեսանեմք զմեղ յայսպիսի
թիւր իղձս մածեալ, գիտասցուք թէ հե-
ռացեալ եմք յԱստուծոյ։ Եւ ապա զի՞նչ.
աղաշեացուք զԱստուած՝ զի զնոյն ալեաց
նորա ցածռւացէ³, այսինքն զներդործու-
թիւն փրփրեալ ալեաց կրից։ Եւ զայս ը-
նորհ յորժամ ընկայնումք, զգուշացուք
չվասանել։ Եւ ահա այսպիսի բարեաց ը-
նորհք որ յԱստուծոյ՝ ասին ուղղակի, զի
ինքն Աստուած անմիջաբար մղէ ՚ի մեզ։

¹ Հ-ԲԵՐԴ. յԵՐ. 62։ ³ ՍԵՒ. ԿԴ. 8։

² ՍԵՒ. Հ. 15։

ԵՐԵՒԱԿԹԱԿԱՆ ԱԽՈՐՃ.

Դ Լ

ԱՆԿԱՏՈՒՆ ՀԱՆԳԻՍ

Օպէտո մարմնայն կենաց ոչ անխայեաց
Առաւած տալ ստեղծուածոց իւրոց, և որ
առաւելն է յատեղծուածու մարդոյն։ Օ ի որ
արարն զնոսա, 'ի պահպանութեան զտեսակ
և զանհատ ունել ամենամեծ և անքնին իւ-
մաստութիւն նորա ոչ արար անուես։ Օ ի
եթէ յետ ստեղծագործութեանն բառնայր
'ի նոցանէ զտեսութիւն իւր, և ահա ամե-
նայնն յաշինչ. բայց և այս անդէպ, որպէս
գեղեցիկս տաէ Օդոսաբնոս։ «Ո՞ր գործա-
ւոր անխնամ թողու զգործ իւր, ո՞ լքանիցէ
և ընդվոյր հարկանիցէ զօր համարեցաւն
հաստել»¹։

Ա երացոյց զօդայինս 'ի ջուրոց, և պահէ-
նա մանաւանդ 'ի փառս մեծութեան իւրոց,
և 'ի զուարձութիւն աչաց բնակչաց երկրիս,
որոց սաք՝ ոչ ընդ երկիր միայն գիտեն կը-
ռուել, այլ և զստս ունին՝ որովք յօդս և

ՅԱՀ. ՊԱՀ. ԳԼ. ԺԲ.

Ճախրեն : Ես սոցանեկ և զանինաման գիտէ
դարմանել , « Ո՞ր սոց զիերակուր ... ձտղուց
ազռաւուց՝ որբ կարգան տո նա ա՞ »¹ : Ելու²
նական վարդապետ շնորհաւորս խօսի վասն
տանս³ . « Վարք ազռաւուց , ասէ , ծնեալ
զձագս , և այն ինչ յօրժամ լերկամարմին և
՚ի մայր փետուրս սպիտակս զնոսա տեսանեն ,
թողուն իրը զօտարի կենդանւոյ ծնունդ
տեսակի , և հեռանան ՚ի նոցունց իրրե զաւ
ւուրս հանգատեսն : Իսկ ձտղքն ոյնորիիկ
ոնինամ և անսնունդ զջէր աղաշեն , այս
ինքն տա նուազիլ իւրեանց յողը այն՝ արտա
րիչ նոցա լորձունս ՚ի կոցաց նոցա իջուցաւ
նէ թանձրամածօ , որոց առաջի ՚ի ժողովին՝
մմզունք հուարեալք , և նորօք շատացեալ
կերակրին և ապրին ձտղքն մինչեւ ՚ի
գարձ մօրն իւրեանց » :

Ետ հանել և ջուրց զզեռունս՝ այսինքն
զձկունս մեծամեծօ և մանունս , որբ ՚ի ծու
վու՝ ՚ի զարդ ծովու , և զուրբրոն ՚ի նոցանէ
մեզ ՚ի կերակուր : Եսյն և զանասունս , յորոց
և զգաստկանս ըստ հրամանին ՚ի համագամ
սղատրատաւ թիւնօ ու աելեցաց : Եսյց այ-
սորիկ և որբ ՚ի սոցա են սակի՝ չեն ինչ նախ-

¹ Սլվ . ՏԵՇ . 9 :

² Ե ԴԵ . ՅԱԼԵՑ :

նաև ապիտե անք կենաց մարդկան, այլ երկրորդ ական իմն վայելք վայելուչք . իսկ որ կարի հարկաւորք՝ հաց, ջուր ։ Վայու երկրումքը հնար կեալ կենաց՝ բանաւորական կենդանեց . ահա այս երկուք՝ նախնականք :

Բայց մի ինչ բնութեան ՚ի միօրինական շատանալոյ վասն, և կամ լու ևս առել՝ ՚ի շձանձրանալոյ ազագս, յաւելառ Վատմաւն ընդ սերման ցորենայ՝ զպառով և զբանջար . “ Եւ ամենայն սերմն և խոս գալար ձեզ ՚ի կերակուր ո¹ : Վա՞ Նոյն և զզեռունս ևս, “ Իրքեւ զբանջար խոսաց ետու ձեզ զամենայն ո² : Իսկ առ Մավսեսիւ՝ զպատշաճաւորսն, զուրբան և զանսուրք որոշարար յաւել, յանարբաց ՚ի բաց կալ կենդանեց, և զուրբան ուտել . “ Եւ այս են զոր ուտիցէք ո³ . — “ Եւ այս է զոր ոչ ուտիցէք ՚ի նոցանել ո⁴ : Եւ սոքա երկրորդ ական : Վայ իմ բանք ասուէն՝ ոչ եթէ զվան մեր զպատրաստեալս ՚ի Տեսանե խոտեն՝ զերկրորդ ականս, և ոչ իսկ զնախնականս : Բայց է ինչ ինչ գիտելիք յերկրորդ ական՝ բաժանաբար, զորս յայտնել արժան համարիմ :

¹ ԾԱՌ . Ա . 30 :

³ Ա . ՕՐԻՆ . ԺԴ . 9 :

² ԱՆԴ . Թ . 5 :

⁴ ԱՆԴ . ԺԴ . 12 :

Երկրորդականք նկատեալ ՚ի մեր սպէսա
ամանք ասին անմիջական , և ոմանքը ընդի-
ջունան : Անմիջական յանասունո , որպէս՝
ոչխար , եղն , այծ , եղն , և որ ՚ի համարի :
Իթեաւոր երկրակենցազա՝ մարի , բագ ,
սագ , և որ այսպիսիք : Յօդաթռիչը՝ լրա-
մարդ , աղաւնի , թխահաւ , և որ սոցին նման
Շնդիջական , որպէս՝ ձու , կաթն , սպանիր ,
կոգի , ձուզոլ , գինի , օղի , և որ ՚ի կարգի :
Եւ վասն այն ընդմիջական ասին , զի ընդ
մեջ մեր և սոցա՝ սոցին արտադրիչը՝ մեզ
